17.12.2018թ.
ք. Կապան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի դեկտեմբերի 10-ին կայացել է ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու հերթական նիստը: Նիստին մասնակցել են ավագանու 15 անդամներից 11-ը: Օրակարգում ընդգրկված բոլոր 24 նախագծերը դրվեցին քվեարկության և ընդունվեցին ավագանու կողմից: Ավագանու նիստի ողջ ընթացքը օրենքով սահմանված կարգի համաձայն հեռարձակվել է:

2018 թվականի դեկտեմբերի 17-ի դրությամբ ընդունված որոշումների տակ ստորագրել են համայնքի ավագանու՝ նիստին մասնակցած անդամներից 10-ը: Աշխատակազմը հեռախոսով կապ է հաստատել ավագանու անդամ Մանաս Կարապետյանի հետ, որը հայտնեց, որ անձնական պատճառներով ստիպված է եղել մեկնել ք. Երևան: Մ. Կարապետյանը խնդրել է ավագանու նիստի ընթացքում յուրաքանչյուր հարցի վերաբերյալ իր կողմից կատարած քվեարկությունը ընդունել ի գիտություն և համարել հիմք:

Հաշվի առնելով համայնքի ընդունած որոշումները ՀՀ Սյունիքի մարզպետարան օրենքով սահմանված ժամկետներում ներկայացնելու պահանջը, որոշվեց դրանք ուղարկել առանց Մ. Կարապետյանի ստորագրության:

Կապան համայնքի ղեկավար՝ Գ. Փարսյան

Աշխատակազմի քարտուղարության բաժնի պետ՝ Ա. Գաբրիելյան

Աշխատակազմի քարտուղարության բաժնի գլխ. մասն. Գ. Հովհաննիսյան